ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ԱՊՐԱՆՔՆԵՐԻ) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջներին համապատասխանության մասով արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հավաստող փաստաթղթի տրամադրման համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում արտադրված՝ հսկողության ենթակա արտադրանքի (ապրանքների) համար՝

- դիմում,
- արտադրողի (պատրաստողի) կողմից վավերացված այն փաստաթղթերի (ստանդարտներ, տեխնիկական պայմաններ, կանոնակարգեր, տեխնոլոգիական հրահանգներ, բաղադրագրեր, առանձնահատկություններ, բաղադրության մասին տեղեկություններ) պատճենները, որոնց համաձայն արտադրվում է արտադրանքը,
- արտադրողի (պատրաստողի) գրավոր ծանուցումն այն մասին, որ իր կողմից արտադրված արտադրանքը (արտադրանքի նմուշները) համապատասխանում է այն փաստաթղթերի պահանջներին, որոնց համաձայն այն արտադրվել է:
  - Որպես ծանուցում ընդունվում են որակի սերտիֆիկատի, անվտանգության (որակի) անձնագրի, արտադրողի (պատրաստողի) կողմից վավերացված որակի վկայականի պատճենները կամ պատրաստողի նամակը (ներկայացվում է նշված փաստաթղթերից մեկը),
- հսկողության ենթակա արտադրանքի (ապրանքների) կիրառման (շահագործման, օգտագործման) կարգի վերաբերյալ արտադրողի (պատրաստողի) փաստաթուղթ (հրահանգ, ձեռնարկ, կանոնակարգ, երաշխավորագիր) կամ դրա պատճենը՝ հայտատուի վավերացմամբ (առկայության դեպքում),
- հայտատուի կողմից վավերացված՝ հսկողության ենթակա արտադրանքի (ապրանքների) պիտակի (փաթեթավորում) պատճենները կամ նախագծերը (մակետները),
- հայտատուի կողմից վավերացված՝ սննդի կենսաբանական ակտիվ հավելումների առանձնահատուկ ակտիվությանը վերաբերող փաստաթղթերի պատճենները (այն պատրաստուկների համար, որոնք պարունակում են անհայտ բաղադրիչներ, ոչ պաշտոնական բաղադրագրեր),
- նմուշառման ակտը (փորձանմուշ),

- արտադրողի (պատրաստողի) հայտարարագիրը սննդամթերքում գենետիկորեն ձևափոխված (տրանսգեն) օրգանիզմների, նանոնյութերի, հորմոնների, պեստիցիդների առկայության մասին,
- հետազոտությունների (փորձարկումների) արձանագրությունները (հիգիենիկ փորձաքննությունների ակտերը), գիտական հաշվետվությունները, փորձագիտական եզրակացությունները,
- քաղվածք իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրից կամ անհատ ձեռնարկատերերի միասնական պետական ռեեստրից.

Արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հավաստող փաստաթղթի տրամադրման համար ներկայացված փաստաթղթերի հավաստիության պատասխանատվությունը կրում է հայտատուն:

2) Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից դուրս արտադրվող հսկողության ենթակա արտադրանքի (ապրանքների) համար՝

- դիմում,
- պետական գրանցում իրականացնող անդամ պետության օրենսդրությանը համապատասխան վավերացված փաստաթղթերի (ստանդարտներ, տեխնիկական պայմաններ, կանոնակարգեր, տեխնոլոգիական հրահանգներ, բաղադրագրեր, առանձնահատկություններ, բաղադրության մասին տեղեկություններ) պատճենները, որոնց համաձայն արտադրվում է արտադրանքը,
- արտադրողի (պատրաստողի) հայտարարագիրը սննդամթերքում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների, նանոնյութերի, հորմոնների, պեստիցիդների առկայության մասին,
- հսկողության ենթակա արտադրանքի (ապրանքների) կիրառման (շահագործման, օգտագործման) կարգի վերաբերյալ արտադրողի (պատրաստողի) փաստաթուղթ (հրահանգ, ձեռնարկ, կանոնակարգ, երաշխավորագիր) կամ դրա պատճենը՝ հայտատուի վավերացմամբ (առկայության դեպքում),
- արտադրողի (պատրաստողի) գրավոր ծանուցումն այն մասին, որ իր կողմից արտադրված արտադրանքը (արտադրանքի նմուշները) համապատասխանում է այն փաստաթղթերի պահանջներին, որոնց համաձայն այն արտադրվել է:

➢ Որպես ծանուցում ընդունվում են որակի սերտիֆիկատի, անվտանգության (որակի) անձնագրի, վերլուծության սերտիֆիկատի, որակի վկայականի, ազատ առևտրի սերտիֆիկատի կամ արտադրողի՝ պետական գրանցում իրականացնող անդամ պետության օրենսդրությանը համապատասխան վավերացված գրության պատճենները (ներկայացվում է նշված փաստաթղթերից մեկը),

- հայտատուի կողմից վավերացված արտադրանքի պիտակի (փաթեթավորման) պատճենները,
- սննդամթերքում կենսաբանական ակտիվ հավելումների առանձնահատուկ ակտիվությանը վերաբերող փաստաթղթերի բնօրինակները կամ պատճենները՝ վավերացված պետական գրանցում իրականացնող անդամ պետության օրենսդրությանը համապատասխան (այն պատրաստուկների համար, որոնք պարունակում են անհայտ բաղադրիչներ, ոչ պաշտոնական բաղադրագրեր),
- պատրաստուկի (պեստիցիդներ, ագրոքիմիկատներ, բույսերի պաշտպանության միջոցներ և աճի խթանիչներ) թունաբանական բնութագրմանը վերաբերող փաստաթղթերի բնօրինակները կամ պատճենները՝ վավերացված պետական գրանցում իրականացնող անդամ պետության օրենսդրությանը համապատասխան,
- սննդի կենսաբանական ակտիվ հավելումներ, սննդային հավելում, ախտահանիչ միջոց (միջատասպան և կրծողների վերացման միջոց), կոսմետիկ արտադրանք արտադրող երկրի առողջապահության բնագավառի իրավասու մարմինների (պետական այլ լիազոր մարմիններ) կողմից տրված փաստաթղթի պատճենը՝ վավերացված պետական գրանցում իրականացնող անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որը հավաստում է տվյալ արտադրանքի անվտանգությունը և թույլատրում է արտադրող երկրում տվյալ արտադրանքի ազատ շրջանառությունը կամ արտադրողի կողմից տեղեկատվությունն այդպիսի փաստաթղթի ձևակերպման անհրաժեշտության բացակայության մասին,
- հետազոտությունների (փորձարկումների) արձանագրությունները (հիգիենիկ փորձաքննությունների ակտերը), գիտական հաշվետվությունները, փորձագիտական եզրակացությունները,
- Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք հսկողության ենթակա արտադրանքի նմուշների ներմուծումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ վավերացված պետական գրանցում իրականացնող անդամ պետության օրենսդրությանը համապատասխան: